

## ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**Ծնվել է 1956 թվականի սեպտեմբերի 10-ին, Երևանում:**

### Կրթությունը`

**1977թ.** Խաչատուր Աբովյանի անվան Չայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության և աշխարհագրության ֆակուլտետ,

**1980թ.** Խաչատուր Աբովյանի անվան Չայկական պետական մանկավարժական ինստիտուտի ընդհանուր պատմության ամբիոնի ասպիրանտուրա:

### Աշխատանքային գործունեություն`

**2011թ. հոկտեմբերին 11-ի և 12-ի** ՀՀ Նախագահի հրամանագրերով նշանակվել է Ավստրիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան և համատեղության կարգով` Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության առաքելության ղեկավար (նստավայրը` Վիեննա):

**2005-2011թթ.** ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ,

**1999-2005թթ.** ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, Ամերիկյան պետությունների կազմակերպությունում ՀՀ մշտական դիտորդ

**1994-1999թթ.** Հունաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, կատարել է Աթենքում հավատարմագրված դեսպանների ավագի պարտականությունները: Համատեղության կարգով հանդիսացել է ՀՀ դեսպանը Կիպրոսում, Սլովենիայում, Խորվաթիայում, Ալբանիայում և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունում,

**1992-1993թթ.** ՀՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար,

**1992թ.** Շնորհվել է «Արտակարգ և լիազոր դեսպան» դիվանագիտական աստիճան,

**1991-1994թթ.** ՀՀ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ,

**1990-1991թթ.** Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի ուսումնասիրման բաժնի գիտական թեմայի ղեկավար,

**1986-1990թթ.** Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի հրահանգիչ, արտաքին կապերի գծով խորհրդատու,

**1980-1986թթ.** Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի լաբորանտ, կրտսեր, ավագ գիտաշխատող, «Հայագիտությունը արտասահմանում» բաժնի վարիչ,

## **Գիտա-մանկավարժական գործունեություն`**

Ունի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (1999թ.), պրոֆեսորի կոչում (2011թ.), 120-ից ավելի գրքերի և գիտական աշխատությունների հեղինակ է, դասավանդում է Երևանի Պետական Չամալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, ԵՊՀ խորհրդի, ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտին կից գործող մասնագիտական խորհրդի, «Հայոց ցեղասպանություն» թանգարանի, Հայաստանի ազգային գրադարանի և ԵՊՀ Զաղաքակրթությունների և մշակութային ուսումնասիրությունների կենտրոնի գիտական խորհուրդների անդամ է:

## **Խրախուսանքներ և պարգևատրումներ`**

- 1983թ.** Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի գովեստագիր
- 1999թ.** Աթենք քաղաքի ոսկե մեդալ (Հունաստան)
- 2001թ.** ՀՀ ԱԳՆ հուշամեդալ
- 2005թ.** Թեքեյան Մշակութային Միության «Հայկաշեն Ուզունյան» պատմա-բանասիրական մրցանակ
- 2006թ.** ԵՊՀ ոսկե մեդալ
- 2007թ.** ՀԱՊԿ հոբեյանական մեդալ և պատվոգիր
- 2008թ.** ՀՀ ՉՈԻ «Գարեգին Նժդեհ» մեդալ
- 2009թ.** ՀՀ ԱԳՆ «Զոն Կիրակոսյանի անվան» մեդալ
- 2011թ.** ՀՀ ՊՆ պատվոգիր
- 2011թ.** «Մխիթար Գոշ» մեդալ

## **Օտար լեզուների իմացություն`**

Ռուսերեն, անգլերեն:

## **Ընտանեկան կարգավիճակ`**

Ամուսնացած է, ունի որդի:

*2018թ. նոյեմբերի 28-ի ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը` Լոնդոն):*